ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Ազատաշեն համայնք, 3-րդ փողոց թիվ 10/1
Հեռ. 094-81-99-77
email azatashen.hamaynk@mail.ru

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ազատաշեն համայնքի

10.04.2013թ. Գ.Ազատաշեն

Տեղի ունեցավ ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն համայնքի հանրային լսումներ, որին մասնակցում էին գյուղապետարանի աշխատակիցներ, ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ և Արարատի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության աշխատակից Արևհատ Ասատրյանը:

Ներկայացվեց հաշվետվություն համայնքի ղեկավարի կողմից համայնքում կատարված աշխատանքների վերաբերյալ՝

2012 թվականի ընթացքում Ազատաշեն համայնքի կարիքավոր ընտանիքներին հատկացվել է 660,0 հազ դրամ դրամական օգնություն: 2012 թ -ի բյուջեի սեփական եկամուտները հավաքագրվել է 102 %: Համայնքի բնակչությանը ներկայացվեց 2013 թվականի 1-ին կիսամյակում բյուջեի կատարողականը, հավաքագրվել է հողի հարկ տարվա համար նախատեսված գումարի 10 %, գույքահարկ /շինության/ 12 %, փոխադրամիջոցների 22 %, տեղական տուրք 10 %: Համայնքին հատկացվել է հաշվետու ժամանակահատվածում 1732,8 հազ դրամ դոտացիա:

Համայնքի ղեկավարի կողմից կատարվել է քաղաքացիների 18 ընդունելություն, իսկ ավագանու 6 ընդունելություն:

2012թվականի ընդացքում համայնքի բյուջեի միջոցների հաշվին վերանորոգվել է վարչական շենքի 2-րդ հատվածը մասնակի, որի համար ծախսվել է 3600,0 հազ դրամ, սակայն աշխատանքները ավարտելու համար անհրաժեշտ է 5000,0 հազ դրամ: Համայնքի ողջ տարածքում կատարվում է կենտրոնացված աղբահանում, յուրաքանչյուր տարվա համար բյուջեից նախատեսվում է 600,0 հազ դրամ: Համայնքի երեք փողոցներում կատարվել է խճատպատման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարը ազգաբնակչությանը տեղեկացրեց որ պետական բյուջեից դպրոցի վերանորոգման աշխատանքների համար նախատեսված գումարը արդեն հատկացվել է, սկսվել է նախագծային աշխատանքները, շուտով կսկսվի տանիքի վերանորոգման աշխատանքները:

Ազգաբնակչության հետ քննարկումների ժամանակ վեր հավեցին մի շարք կարևոր հիմնախնդիրներ, մասնավորապես՝

- Կենտրոնական ճանապարհների լուսավորում
- Ոռոգման ջրատարների [illegible] կների տեղադրում

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ